Սայաթ Նովա

Էշխը վառ կրակ

Ղափիա էսպես աշուղ օղլանի օգութլամա.
Արութինի ասած. լավն է:

Էշխը վառ կըրակ է Էրվելով գու քա,
Շատ մարթ կոսե՝ յիս յարի յիդ ման գու քամ.
Էս դարդեմեն օվ չէ քաշի՛ վո՞ւչ քաշե,
Օ՛վ յար սիրե, է՛լ չասե թե՝ ջան գու քամ:

Շատ մարթ կա՝ է՛ն գըլխեն սըրտում ունե դամ.
Բազի մարթ չէ քաշի, էշխեմեն է խամ.
Ինչ ասիս կոնիյ տա՝ սերն է անըսկամ.
Հալվեցա, մաշվեցա, էլ ի՞նչ ջան գու քամ:

Էշխը վուր կա՝ հազար բաբաթ հանգ ունե,
Ուշկ ու միտկը կու քընեցնե՝ բանգ ունե.
Բըռնածը չի թողնի՝ դայիմ չանգ ունե,
Էնդու համա՝ խան յիդ կեհամ, խան գու քամ:

Թե դուն էշխի հիդ ման գալը հարցընիս
Չի դիմանա Ռոստոմ Զալը՝ հարցընիս.
Թե բեմուրվաթ յարի հալը հարցընիս,
Ասում է թե՝ սուլթան գու քամ, խան գու քամ:

Սայաթ Նովեն ասաց՝ շատի ջանք դըրի,
Մե բափա չը տեսա հում կաթնակիրի.
Օվ օր ինձ չի սիրի՝ յիս էլ չիմ սիրի,
Սերը սեր կու բերե՝ սիրեկան գու քամ: